

Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ 33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

/նիստը կայացել է 2021թ. օգոստոսի 23-ին/

Նիստին մասնակցում են մանկխորհրդի 22 անդամները:

Օրակարգում`

1.Օրակարգի հարցերի հաստատում:

/զեկ. Ն. Մխիթարյան /

2.Մեթոդական միավորումների կազմավորում:

/զեկ. Ն.Մխիթարյան/

3.Վերաքննությունների մասին:

/զեկ. Ն. Մխիթարյան /

4. Արտերկրից եկած սովորողի երկրորդ կիսամյակի գիտելիքների ստուգումներ կազմակերպելու մասին:

/զեկ. Ն. Մխիթարյան /

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել հաստատության մեթոդմիավորումների կազմի մեջ մտնող առարկաների խումբը` ելնելով ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման խնդիրներից և ֆինանսական հնարավորություններից:

Հիմք ընդունելով սովորողների փոխադրման և ավարտման կարգը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

3.1 Հաստատել վերաքննությունների հանձնաժողովի կազմը և ժամանակացույցը

3.2 Հանձնարարել Կ.Մկրտչյանին տեղեկացնել սովորողի ծնողին վերաքննության առաջիկա օրվա մասին:

Հիմք ընդունելով գործող կարգի դրույթները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

4.1 Կազմակերպել գիտելիքների ստուգում 7-րդ դասարանի աշակերտի համար:

4.2 Հաստատել գիտելիքների ստուգման ժամանակացույցը:

Ժողովի նախագահ՝

Ն.Մխիթարյան

Քարտուղար՝

Վ.Թադևոսյան